ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

16 սեպտեմբերի 2025թ. **N 53-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 43-րդ հոդվածի 8.1-րդ մասի առաջին պարբերությունը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի 2025 թվականի սեպտեմբերի 16-ի ՆԿ-2-Ա կարգադրությամբ սահմանված՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների 2025 թվականի ամենամյա պարտադիր ատեստավորման անցկացման առաջին փուլի ժամանակացույցը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի մարտի 28-ի թիվ 33-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգի 11-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների 2025 թվականի առաջին փուլի ամենամյա պարտադիր ատեստավորման անցկացման նպատակով՝ ձևավորել ատեստավորման հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վահագն Հովակիմյան (ատեստավորման հանձնաժողովի նախագահ),

2) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ Նունե Հովհաննիսյան (ատեստավորման հանձնաժողովի անդամ),

3) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Արմեն Սմբատյան (ատեստավորման հանձնաժողովի անդամ),

4) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ Աննա Գրիգորյան (ատեստավորման հանձնաժողովի անդամ),

5) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ Ժիրայր Կարապետյան (ատեստավորման հանձնաժողովի անդամ),

6) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ Սիլվա Մարկոսյան (ատեստավորման հանձնաժողովի անդամ),

7) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ Արուսյակ Տերչանյան (ատեստավորման հանձնաժողովի անդամ):

2. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների 2025 թվականի առաջին փուլի ամենամյա պարտադիր ատեստավորման անցկացման նպատակով ձևավորված ատեստավորման հանձնաժողովի քարտուղար նշանակել Լուիզա Ավետիսյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**